ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 19 30. 11. 2017թ.

Հետք պարբերականի լրագրող
Սեդա Ղուկասյանին

Հարգելի Սեդա Ղուկասյան,

Ի պատասխան Ձեր 24. 11. 2017թ. գրության, տեղեկացնում եմ, որ սույն թվականի նոյեմբերի 29-ին, որպես ՀՀ ԱԺ առողջապահության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ կազմակերպել և մասնակցել եմ քաղաքացիների ընդունելությանը, որտեղ քննարկվել են բժշկասոցիալական փորձաքննության, բժշկական օգնության, ինչպես նաև աշխատանքի տեղավորման վերաբերյալ հարցեր: Քաղաքացիների կողմից բարձրացված խնդիրները ունեին հստակ օրենսդրական կարգավորումներ, ուստի դրանք հիմք չեն հանդիսացել որևէ օրենսդրական նախաձեռնություն հեղինակելուն կամ գործող օրենքում փոփոխություններ կատարելուն:

Որպես լրացուցիչ տեղեկություն նշեմ, որ ՀՀ ԱԺ 6-րդ գումարման առաջին և երկրորդ նստաշրջանների ընթացքում քաղաքացիների կողմից իրենց հուզող հարցերի վերաբերյալ ստացել եմ դիմումներ բանավոր՝ հեռախոսազանգերի միջոցով և հանդիպումների ընթացքում, և գրավոր՝ փոստի միջոցով, այդ թվում՝ էլեկտրոնային:

Քաղաքացիների բանավոր դիմումները վերաբերվում էին՝ սոցիալական բնույթի տարբեր հարցերին, որոնց տվել եմ պարզաբանումներ, ներառական կրթության, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրացման, հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողների՝ երեխաների համապատասխան ծառայություններ ստանալու, վերականգնողական ծառայություններ ստանալու վերաբերյալ հարցերին:

Նշեմ, որ հանդիպում եմ ունեցել Հայրենական մեծ պատերազմի վետերանների հետ, որի ընթացքում դիմել էին ինձ վետերանների հանգիստը հանգստյան տներում կազմակերպելու վերաբերյալ հարցը լուծելու խնդրանքով: Հանդիպումից հետո հարցը քննարկել եմ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի և ՀՀ ֆինանսների

նախարարի հետ, որի արդյունքում նշված հարցը դրական լուծում է ստացել և սույն թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Հայրենական մեծ պատերազմի 46 վետերանների տրամադրվել են համապատասխան ուղեգրեր:

Քաղաքացիների գրավոր դիմումները վերաբերվում էին՝ բժշկական օգնության, աշխատանքի տեղավորման, սոցիալական աջակցության, ներման, ինչպես նաև զինվորական ծառայությունից խուսափելու հետևանքով քրեական պատասխանատվությունից ազատվելու վերաբերյալ հարցերին:

Գրավոր առաջարկություններ ստացել եմ հասարակական կազմակերպության ներկայացուցիչների կողմից՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ: Նշված օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացված առաջարկները ուսումնասիրվել են իմ կողմից, այնուհետև քննարկվել ինչպես առաջարկության հեղինակների, այնպես էլ ոլորտի պատասխանատուների հետ: Ընդունելի առաջարկությունները առանձնացվել և իմ կողմից ներկայացվել են ՀՀ ԱԺ առողջապահության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովին, որի 05. 09. 2017 թ. նիստում դրանք քննարկվել և ընդունվել են: Առաջարկությունների վերաբերյալ առավել մանրամասն կարող եք տեսնել հետևյալ հղմամբ՝ http://www.parliament.am/draft_history.php?id=8841:

Կից ուղարկում եմ քաղաքացիների ընդունելությունից լուսանկարներ:

Հարգանքով՝

Ջեմմա Բաղդասարյան